ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ի՞նչ է ինտերվենցիոն ուռուցքաբանությունը (օնկոլոգիա)

Ներկայիս ուռուցքաբանական բուժօգնության 4 գլխավոր հիմնասյուները

Միջամտությունները և բուժման տարբերակները

- Ռադիոհաճախականային աբլացիա (RFA)
- Միջզարկերակային քիմիաէմբոլիզացիա (TACE)
- Միջզարկերակային ռադիոէմբոլիզացիա (TARE)
- Միկրոալիքային աբլացիա
- Կրիոաբլացիա

Միջամտությունները և բուժման տարբերակները

Ինտերվենցիոն ուռուցքաբանության բուժական մեթոդների ժամանակ կիրառվում են պատկերային (ճառագայթային ախտորոշման) ուղղորդմամբ նվազագույն ինվազիվ միջամտություններ, որոնք թիրախավորում են քաղցկեղը կամ օրգանիզմում քաղցկեղային հիվանդությունները: Բուժական միջամտությունն իրականացվում է մաշկի վրա փոքր անցքի միջոցով, ինչը թույլ է տալիս կրճատել բուժման ժամանակը, ցավը, ինչպես նաև նվազեցնել բուժառուի մոտ բարդությունների վտանգը: Հանդիսանալով ժամանակակից ուռուցքաբանության ամենաարագ զարգացող հիմնասյուներից մեկը՝ ինտերվենցիոն ուռուցքաբանությունն առաջնորդվում է տեխնոլոգիական նորարարություններով և կենտրոնացած է երեք հիմնական ուղղությամբ՝

«ԻՈ» կենտրոնացման ուղղությունները

Ինտերվենցիոն ուռուցքաբանը քաղցկեղով հիվանդի բուժման թիմի շատ կարևոր անդամ է: Նա մասնակցում է բուժառուի ընդունմանը կլինիկայում, «թումոր բորդին» և բուժման բազմագիտակարգային թիմի աշխատանքներին և ակտիվ ներգրավված է բուժառուի ախտորոշման և վարման գործընթացում:

Քաղցկեղի ախտորոշում

Ինտերվենցիոն ուռուցքաբանները քաղցկեղի ախտորոշման համար օգտագործում են պատկերային ախտորոշման մեթոդներ, որպեսզի ստանան հյուսվածքից նմուշ:

Քաղցկեղի վարում

Ինտերվենցիոն ուռուցքաբանները քաղցկեղի բուժման նպատակով օգտագործում են բուժական նյութեր,

- Քաղցկեղի ախտորոշում
- Քաղցկեղի բուժում
- Քաղցկեղի ախտանշանների կառավարում

ԻՈՒ և լյարդի քաղցկեղ

Հոկտեմբերը լյարդի քաղցկեղի իրազեկման ամիսն է: Մեծահասակների մոտ հանդիպում է լյարդի քաղցկեղի երկու հիմնական տեսակ՝ լյարդաբջջային քաղցկեղ և խոլանգիոկարցինոմա: Լյարդի առաջնային քաղցկեղի այս երկու տեսակներն էլ մեծ տարածում են գտել: Ինտերվենցիոն ուռուցքաբանության մեթոդները կիրառվում են քաղցկեղի բուժման մյուս մեթոդների հետ համակցված կամ երբեմն էլ՝ դրանց փոխարեն, եթե օրինակ՝ բուժառուն ծանր վիճակում է վիրահատական մեթոդի համար: Բացի այդ, ինտերվենցիոն ուռուցքաբանության մեթոդները կիրառվում են քիմիաթերապիայից և վիրահատությունից հետո կրկնվող մետաստազների դեպքերում՝ երկարացնելու բուժառուների կյանքը:

որոնք ներմուծում են ուռուցքի մեջ ներանոթային կաթետերների միջոցով կամ անմիջապես ուռուցքի մեջ ներարկման եղանակով: Այսպիսով, պատկերային ուղղորդման պայմաններում բժշկական սարքերի ու նյութերի միջոցով թիրախավորում են ուռուցքը, որպեսզի դրա բջիջները ոչնչացնեն: Այս մեթոդները նաև կիրառվում են որպես համակցված բուժման մաս:

Քաղցկեղի ախտանշանների և ցավի կառավարում

Ախտանիշների մեղմացման մեթոդներն այն մեթոդներն են, որոնք ուղղված են քաղցկեղից առաջացած ցավը մեղմելուն, բուժառուի կյանքի որակը բարձրացնելուն և բուժական այլ մեթոդների հանդեպ հանդուրժողականությունը բարձրացնելուն:

Ինտերվենցիոն ուռուցքաբանության առավելություններն են.

- Հետմիջամտային վերականգնման կարճ ժամանակահատված
- Աննշան կողմնակի ազդեցություններ
- Առողջ օրգանների վնասման համեմատաբար ավելի քիչ վտանգ

Հասանելի՞ է արդյոք ինտերվենցիոն ուռուցքաբանությունը Հայաստանում

Հայաստանում գործում է ինտերվենցիոն ռադիոլոգիայի ծառայություն, որտեղ իրականացվում են ողջ աշխարհում լայն տարածում գտած մի շարք նորագույն միջամտություններ, այդ թվում՝ ուռուցքաբանության պրոֆիլի, ինչպիսիք են՝ ուռուցքի ռադիոհաճախականային աբլացիան, ուռուցքի քիմիաէմբոլիզացիան, բարդ տեղակայման ուռուցքներից նմուշառում և այլն: